

փանոս վրդ.ի յորդորները Յուսիկ քհ.ի ուղղուած ամուսնական կեանքի սրբութեան մասին, տեսնել (Անդ. էջ 149—75):

ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ. ՓԻՐ.— Ռչտունեաց գաւառէն: Նոյն վանքին մէջ ՊՂԴ (= 1445) թուին ընդօրինակուած Մաշտոցի մը յիշատակարանին մէջ կը կարգանք հետեւեալը. «... եւ ի կաթողիկոսութեան մերոյ վիճակիս տեառն Դաւթի՛ վարդապետ ոմն երեւելի՛ բարեսէր եւ աստուածային ձրիւքն բարգաւաճեալ՝ որոյ անուն Ստեփանոս ճանաչի՛ մականունն Փիւր՝ յերկրէս Ռչտունեաց, ի գեղջէն Բախվանից աշակերտ գոլով Յովհաննու Որոտնեցոյ՝ մականունն Կախիկ կոչեցելոյ՝ սորա վարդապետական քարոզութեամբ շրջտկայեալ ի վերայ ամենայն երկրի՛ ընդ կողմամբ աշխարհի Հոռոմոց՝ ամս բազումս՝ երթոյ միանգամ՝ երկիցս յերուսաղէմ. և ապա դառնայ վերըստին եւ գայ յաշխարհս հայոց. ի բնիկ եւ ի սեփական երկիրս իւր՝ մեծաւ ընծայիւք ամենայն եկեղեցեացս, շուրջաւ և սկիհ եւ Աւետարան բերելով վանօրէից եւ զիւզօրէից եկեղեցեաց »: (Նօսար, էջ 138): Իսկ Աղթամարցի Մինասենց Թովմա վարդապետի *sarkrapetian* մէջ կը յիշուի թէ՛ Ստեփանոս վրդ. նորաչէն Ս. Յակոբ վանքին գործը իր աշակերտին Սիմէոնի յանձնելով «դէմ եղեալ՝ երթայ դարձեալ ի ս. քաղաքն Երուսաղէմ և վախճանի անդ» (Անդ. էջ 87):

ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ. ՔԷՖԷՑԻ.— Մբ. Նւ. Երուսաղէմի Գրիգոր պարք. Շղթայակիրի օրով. իր տուած յիշատակին համար (ՄԶ. Թ. 532):

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՐՄԼԱՆԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.— Ծ. 1822 Դեկտ. 25ին, Պոլիս, հայրը Եղիկ, վանցի Ասրանի գաւաղը, մայրը՝ Կեսարացի ծեփիչ Պօղոսի աղջիկը՝ Հռիփսիսե. աշկ. Երուսաղէմի ազգ. ձեմարանի (1839—41). շրջանաւարտ բժշկ. վարժ.ին 1847ին. վարած է կրթական և հանրային կարևոր պաշտօններ: 1879ին, Երուսաղէմ կուգայ իրր յիսգօր *fenix* Ս. Յակոբի վանքին վանական, վարչական և հաշուական գործերուն համար. իր քննութիւններուն տեղեկագիրը կը ներկայացնէ Ընդհ. Ժողովի որուն շնորհակալութեան կ'արժանանայ. կը վախճանի 1901ին: Տեսնել իր ընդարձակ կենսագրութիւնը (Հա. 1905, էջ 75—79. 111—113. 142—149. 177—186):